

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի.

1) 1-ին մասի.

ա. առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, եթե սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:».

բ. երկրորդ պարբերությունը «ունենալու» բառից հետո լրացնել «և բնակվելու» բառերով.

գ. երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեզիտորում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու ժամանակահատվածում:».

2) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի.

1) առաջին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմերի անդամներին, բորտօպերատորներին և բորտուղեկցորդներին, եթե լրացել է նրանց 45 տարին, և նրանք աշխատել են առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 20 տարին երկարամյա ծառայության ստաժ է, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատվելու դեպքում՝ եթե նրանք աշխատել են առնվազն 20 օրացուցային տարի, որից առնվազն 15 տարին երկարամյա ծառայության ստաժ է.».».

2) երկրորդ կետում «ծառայել» բառերը փոխարինել «աշխատել» բառով.

3) երրորդ կետը «25» թվից հետո լրացնել «օրացուցային» բառով:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի.

1) 1-ին մասի աղյուսակի «Տարիքային խումբը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Տարիքային խումբը
մինչև 23
23-ից մինչև 26
26-ից մինչև 29
29-ից մինչև 32
32-ից մինչև 35
35-ից մինչև 38
38-ից մինչև 41
41-ից մինչև 44
44-ից բարձր

».

2) 2-րդ մասի «ստաժից» բառը փոխարինել «ստաժի տևողությունից» բառերով:»:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի.

1) 1-ին մասի՝

ա. երրորդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակին, եթե նրա հաշմանդամության պատճառը մանկուց հիվանդությունն է, նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը և ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում.».

բ. հինգերորդ կետը «խնամքով» բառից հետո լրացնել «, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակչության վայրում (հասցեում)» բառերով.

գ. վեցերորդ կետը «պապին» բառից առաջ լրացնել «տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ հաշմանդամ ճանաչված» բառերով.

դ. վերջին պարբերությունում «համատեղ բնակվել են նույն բնակչության վայրում (հասցեում)» բառերը փոխարինել «նրա հետ համատեղ հաշվառված են եղել նույն բնակչության վայրում (հասցեում)» բառերով.

ե. վերջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն մասի 5-րդ կետում նշված անձը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունի մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան հետ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում նույն բնակչության վայրում (հասցեում) հաշվառված լինելու ժամանակահատվածում.».

2) 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

3) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է, եթե կերակրողը մահվան օրվա դրությամբ ունեցել է սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատանքային ստաժը՝ ըստ տարիքային խմբերի:».

4) 8-րդ մասի.

ա. առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Հաշմանդամ ճանաչված անձի մահանալու դեպքում նրա ընտանիքի անդամներին կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է, եթե կերակրողը հաշմանդամություն սահմանելու օրվա դրությամբ ունեցել է սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված ստաժը՝ ըստ տարիքային խմբերի:».

բ. երկրորդ պարբերությունը «անդամներին» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառով:

Հոդված 5. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը «հիվանդության» բառից հետո լրացնել «, վնասվածքի կամ խեղման» բառերով:

Հոդված 6. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը «չափով» բառից հետո լրացնել «, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի չափի 150 տոկոսից ոչ պակաս» բառերով:

Հոդված 7. Օրենքի 24-րդ հոդվածի.

1) 1-ին մասից հանել «սույն օրենքով» բառերը,

2) 2-րդ մասում «Դրամական» բառը փոխարինել «Զինծառայողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական» բառերով:

Հոդված 8. Օրենքի 29-րդ հոդվածի.

1) 3-րդ մասը «Հայաստանի Հանրապետությունում» բառերից հետո լրացնել «հանրային ծառայության» բառերով.

2) 4-րդ մասը «Հայաստանի Հանրապետությունում» բառերից հետո լրացնել «հանրային ծառայության» բառերով.

3) 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով.

«5. Ժամանակավոր անաշխատունակության և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նպատակային արձակուրդի ժամանակահատվածները աշխատանքային ստաժում հաշվառվում են անկախ աշխատավարձ ստանալու (սոցիալական վճար կամ եկամտային հարկ վճարելու) հանգամանքից»:

Հոդված 9. Օրենքի 30-րդ հոդվածի.

1) 1-ին մասի «աշխատանքային ստաժում» բառերը փոխարինել «երկարամյա ծառայության ստաժում» բառերով,

2) 2-րդ մասի «աշխատանքային» բառը փոխարինել «երկարամյա ծառայության» բառերով.

3) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելուց հետո աշխատած կամ ծառայած մեկ օրացուցային տարին աշխատանքային ստաժում հաշվարկվում է որպես մեկ տարվա ստաժ»:

4) 6-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ և 8-րդ մասերով.

«7. Մահացած կերակրողի աշխատանքային ենթադրյալ կենսաթոշակը հաշվարկելիս նրա աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև այլ գործունեության ժամանակահատվածները, ինչպես նաև թոշիչային ժամերով հաշվարկված երկարամյա ծառայության ստաժը:

8. Բռնադատված լինելու ժամանակահատվածները 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ դարձած անձի աշխատանքային ստաժում հաշվառվում են եռակի չափով, սկսած 14 տարեկանից, անկախ կենսաթոշակ նշանակելու համար պահանջվող աշխատանքային ստաժի առկայությունից»:

Հոդված 10. Օրենքի 33-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 33. Կենսաթոշակ նշանակելը

1. Կենսաթոշակը *կենսաթոշակի իրավունք ունեցող* անձի, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի գրավոր դիմումի հիման վրա նշանակում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա՝ Հայաստանի Հանրապետությունում *կենսաթոշակի իրավունք ունեցող անձի հաշվառման հասցեի* մասին տվյալների: *Կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացնում է անձամբ:*

Կենսաթոշակի իրավունք ունեցող՝ տասնչորս տարին լրացած անձը կարող է կենսաթոշակ նշանակելու դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել անձամբ:

2. Կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմում ներկայացնելու օրը: Դիմումին կցվում են օրենսդրությամբ սահմանված՝ կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

3. Եթե դիմումին չի կցվում սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, ապա կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, սոցիալական վճար կատարած լինելը ճշտում է պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալներով:

4. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) նշանակել կենսաթոշակ,

2) նշանակել կենսաթոշակ և տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին,

3) մերժել կենսաթոշակ նշանակելը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի առաջին և երկրորդ կետերում նշված դեպքերում՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, կազմում է կենսաթոշակի էլեկտրոնային գործ:

6. Սույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ կետում նշված որոշումը կայացվում է, եթե ներկայացված փաստաթղթերը և առկա տեղեկատվությունը բավարար են անձին կենսաթոշակ նշանակելու համար, սակայն առկա է աշխատանքային ստաժում չհաշվառված ժամանակահատված:

7. Կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

1) անձը չունի կենսաթոշակի իրավունք.

2) *կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով.*

3) ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

8. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու և լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները և որոշումը բողոքարկելու կարգը:

9. Կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը, կենսաթոշակ նշանակելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 11. Օրենքի 34-րդ հոդվածում.

1) 1-ին մասի առաջին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու օրվանից (բայց ոչ վաղ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից)՝ եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում.».

2) 1-ին մասի երրորդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) կերակրողի մահվան (սույն օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից (բայց ոչ վաղ, քան կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է կերակրողի մահվան (սույն օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում.».

3) 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով.

«2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետներից հետո դիմելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից:»:

Հոդված 12. Օրենքի 35-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը «կենսաթոշակառուի» բառից հետո լրացնել «, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի» բառերով.

2) 7-րդ մասի երկրորդ պարբերությունը և 8-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

3) 9-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«9. Կենսաթոշակը նաև վճարվում է կենսաթոշակառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) կողմից Հայաստանի Հանրապետությունում տրված և Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով, եթե այդ մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում»:

Հոդված 13. Օրենքի 36-րդ հոդվածի.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է յուրաքանչյուր հաջորդ ամսվա կենսաթոշակի գումարի հետ՝ մինչև սույն օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ վճարելը դադարեցնելը:

Եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է՝ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք հանդիսացող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

Կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել»:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Կենսաթոշակառուի մահվան դեպքում, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է մահացածի ամուսնուն կամ 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային՝ անկախ կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ նույն վայրում (հասցեում) հաշվառված լինելու հանգամանքից, իսկ ընտանիքի այլ անդամին՝ եթե նա, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ հաշվառված է եղել նույն վայրում (հասցեում): Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի մահվան դեպքում՝ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է նաև նրա օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին:

Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում»:

Հոդված 14. Օրենքի 37-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 37. Կենսաթոշակի տեսակը փոխելը

1. Կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակառուի դիմելու դեպքում՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

2. Արտոնյալ պայմաններով, մասնակի կամ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից նրա կենսաթոշակի տեսակը փոխվում է տարիքային աշխատանքային կենսաթոշակի՝ անկախ կենսաթոշակառուի դիմելուց:

3. Տարիքային աշխատանքային կենսաթոշակը արտոնյալ պայմաններով, մասնակի կամ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի փոխվել չի կարող:

4. Կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժը կենսաթոշակի տեսակը փոխելիս հաշվառվում է նույնությամբ:

5. Կենսաթոշակի տեսակը փոխելու դեպքում կենսաթոշակի չափը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Հոդված 15. Օրենքի 38-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 38. Կենսաթոշակը վերահաշվարկելը

1. Աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե՝

1) փոխվել են հիմնական կենսաթոշակի չափը կամ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ տվյալ ամսվա 1-ից.

2) տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակառու ներկայացրել է կենսաթոշակը նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

3) կենսաթոշակառու ներկայացրել է մինչև կենսաթոշակ նշանակելը (վերահաշվարկելը) ընկած ժամանակահատվածում իր կամ մահացած կերակրողի աշխատանքային կամ այլ գործունեության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

4) հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառու, մինչև տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը, կենսաթոշակը նշանակելուց (վերահաշվարկելուց) 12 ամիս հետո ներկայացրել է այլ գործունեության ժամանակահատվածի մասին փաստաթուղթ՝ դիմումը և այդ փաստաթուղթը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

2. Սոցիալական կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե փոխվել է հիմնական կենսաթոշակի չափը՝ տվյալ ամսվա 1-ից:

3. Զինվորական կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե՝

1) փոխվել է զինծառայողների դրամական բավարարման կամ սննդի փոխհատուցման գումարի կամ հիմնական կենսաթոշակի չափը՝ տվյալ ամսվա 1-ից.

2) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվել է սույն օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով սահմանված կարգով՝ հաշվի առնելով վերջին զինծառայությունից արձակվելու օրվա դրությամբ զինծառայողի ունեցած զինվորական ծառայության ստաժը և ամսական դրամական բավարարման ու սննդի փոխհատուցման գումարը՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու օրվանից:

4. Կենսաթոշակը վերահաշվարկվում է նաև.

1) հաշմանդամության խումբը փոխվելու դեպքում՝ նոր հաշմանդամության խումբ սահմանելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

2) մահացել է կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող երեխայի կամ առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող զավակի մյուս ծնողը՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:»:

Հոդված 16. Օրենքի 39-րդ հոդվածի՝

1) վերնագրում «կենսաթոշակառուին» բառը փոխարինել «անձին» բառով.

2) 2-րդ մասի առաջին պարբերությունը «կազմակերպությունում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ կազմակերպություններում» բառերով:

Հոդված 17. Օրենքի 41-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. չորրորդ կետում «1-ին մասի 3-րդ,» բառերը փոխարինել «1-ին մասի» բառերով.

բ. վեցերորդ կետը «լրանալու» բառից հետո լրացնել «կամ բնակվելու իրավունքը դադարելու» բառերով.

գ. ութերորդ կետը լրացնել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու և մեկամսյա ժամկետում չհաշվառվելու դեպքում» բառերով.

դ. իններորդ կետից հանել «կամ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացուն» բառերը, իսկ կետը «նշանակելու» բառից հետո լրացնել «, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն և

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացուն Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում կենսաթոշակ նշանակելու» բառերով.

Ե. տասնմեկերորդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տասներկուերորդ, տասներեքերորդ և տասնչորսերորդ կետերով.

«12) աշխատանքային և զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձին հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում.

13) սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձին տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում.

14) կենսաթոշակառուի՝ իր կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում:».

2) 3-րդ մասի՝

ա. երրորդ կետի «ա» ենթակետում «լրանալուն հաջորդող ամսվա 1-ից» բառերը փոխարինել «լրանալու օրվանից» բառերով.

բ. երրորդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. աշխատանքից ազատվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ ազատվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո դիմելու դեպքում՝ գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:».

գ. վեցերորդ կետում «արձակվելու կամ ազատվելու օրվանից» բառերը փոխարինել «արձակվելու կամ ազատվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից» բառերով.

դ. յոթերորդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ութերորդ կետով.

«8) սույն հոդվածի 1-ին մասի 12-րդ և 13-րդ կետերով նախատեսված հիմքերով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցված լինելու դեպքում՝ գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:».

3) 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-րդ և 3.2-րդ մասերով.

«3.1. Հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին հաշմանդամ ճանաչվելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելիս՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվան հաջորդող ժամանակահատվածի համար կենսաթոշակը վճարվում է հաշմանդամության նոր խմբի համար հաշվարկված կենսաթոշակի չափով:

3.2. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի, կենսաթոշակ ստանալու իրավունքը չի վերականգնվում. այս դեպքում անձին կենսաթոշակ է նշանակվում գրավոր դիմումի և կենսաթոշակի գործում առկա կամ դիմումի հետ ներկայացված փաստաթղթերի հիման վրա:».

4) 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով.

«5. Կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է և կենսաթոշակ վճարելը վերսկսվում է, եթե կենսաթոշակառուն, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:»:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 19. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի.

1) առաջին կետը «վրա» բառից հետո լրացնել «, սակայն նշանակված կենսաթոշակի 30 տոկոսից ոչ ավելի» բառերով,

2) երկրորդ կետից հանել «ընտանիքի անդամների թվի փոփոխությունների,» բառերը:

Հոդված 20. Օրենքի 44-րդ հոդվածի.

- 1) 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը «անձին» բառից հետո լրացնել «նշանակվում և» բառերով.
- 2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Թաղման նպաստը նշանակվում է, եթե հուղարկավորությունը կատարվել է Հայաստանի Հանրապետությունում կամ մահվան վկայականը տվել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը: Թաղման նպաստը նշանակվում է գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում:

Թաղման նպաստը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ նշանակելու ամսվան հաջորդող ամսվա կենսաթոշակների վճարման համար սահմանված ժամկետից ոչ ուշ: Սույն պարբերությամբ սահմանված ժամկետում թաղման նպաստը չվճարելու դեպքում՝ չվճարված թաղման նպաստի գումար վճարվում է, եթե դիմումատու կրկին դիմել է թաղման նպաստը նշանակելու ամսվան հաջորդող վեց ամսվա ընթացքում:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված թաղման նպաստի գումարը վճարվում է առանց ժամկետի սահմանափակման:».

- 3) 6-րդ մասը «նպաստ» բառից հետո լրացնել «նշանակելու և վճարելու կարգը,» բառերով:

Հոդված 21. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի առաջին կետի «ը» ենթակետից հանել «, թաղման նպաստի» բառերը:

Հոդված 22. Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով կենսաթոշակառուին ավել վճարված կենսաթոշակի գումարները ենթակա են հետգանձման սույն օրենքով սահմանված կարգով, իսկ եթե դադարել է անձի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը, ապա՝ դատարանի վճռի հիման վրա:»:

Հոդված 23. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ամսվա 1-ից դադարեցվում է այն կենսաթոշակառուների աշխատանքային կամ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը, ում վերջին անգամ վճարվել է սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան նախորդող 60-րդ ամսվա կամ դրան նախորդող ժամանակահատվածի կենսաթոշակի գումարը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ամսվա 1-ից դադարեցվում է այն կենսաթոշակառուների սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունքը, ում վերջին անգամ վճարվել է սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան նախորդող 12-րդ ամսվա կամ դրան նախորդող ժամանակահատվածի կենսաթոշակի գումարը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիների կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում և կենսաթոշակը վճարելը վերսկսվում է օրենքով սահմանված կարգով կենսաթոշակառուի դիմելու դեպքում: Սույն մասով սահմանված դեպքում չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված է եղել Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով):

Եթե Հայաստանի Հանրապետությունում բնակվող (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու համար դիմում է ներկայացրել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, սակայն դիմումի հետ (կամ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը) չի ներկայացրել այլ պետությունից կենսաթոշակ չստանալու մասին փաստաթուղթ, ապա չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու ամսվան նախորդող երեք տարվա՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Սույն մասով սահմանված

դեպքում, եթե կենսաթոշակառու սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կրկին դիմում է չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու համար, ապա չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված է եղել Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով):

Եթե Հայաստանի Հանրապետությունում բնակվող (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու համար դիմում է ներկայացրել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը և դիմումի հետ (կամ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը) ներկայացրել է այլ պետությունից կենսաթոշակ չստանալու մասին փաստաթուղթ, ապա չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու ամսվան նախորդող երեք տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

Եթե մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը անձը դիմել է կենսաթոշակ նշանակելու համար և կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նրան օրենքով սահմանված կարգով տեղեկացրել է լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին, ապա տեղեկացվելուց հետո երեք ամսվա ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից:

Սույն հոդվածի, ինչպես նաև Օրենքի 41-րդ հոդվածի դրույթների հիման վրա, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, համապատասխան փոփոխություններ են կատարվում Օրենքի 45-րդ հոդվածով սահմանված՝ կենսաթոշակառուների միասնական հաշվառումն ապահովող տվյալների շտեմարանում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Ազգային ժողովում 1-ին ընթերցմամբ ընդունված՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի կապակցությամբ արված առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ /024 ընտրատարածք/ ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ /046 ընտրատարածք/ ՍՈՒՔԻԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ /080 ընտրատարածք/ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ /118 ընտրատարածք/	«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունից հանել «և կենսաթոշակ չի ստանում այլ պետությունից» բառերը: <i>Առաջարկում ենք սահմանել, որ ՀՀ-ում բնակվող (հաշվառված) ՀՀ երկրադաքացուն ՀՀ-ում կենսաթոշակ է նշանակվում և վճարվում անկախ այլ երկրի պետությունից կենսաթոշակ ստանալու հանգամանքից:</i>	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ (1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ):
ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ /024 ընտրատարածք/ ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ /046 ընտրատարածք/ ՍՈՒՔԻԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ /080 ընտրատարածք/ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ /118 ընտրատարածք/	«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի իններորդ կետից հանել «կամ Հայաստանի Հանրապետության երկրադաքացուն» բառերը, իսկ «նշանակելու» բառից հետո լրացնել «, կամ Հայաստանի Հանրապետության երկրադաքացուն Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում կենսաթոշակ նշանակելու» բառերը: <i>Առաջարկում ենք սահմանել, որ ՀՀ-ում բնակվող (հաշվառված) ՀՀ երկրադաքացուն ՀՀ-ում կենսաթոշակ է նշանակվում և վճարվում անկախ այլ երկրի պետությունից կենսաթոշակ ստանալու հանգամանքից:</i>	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ (17-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետ):
ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ /024 ընտրատարածք/ ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ /046 ընտրատարածք/ ՍՈՒՔԻԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ /080 ընտրատարածք/ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ	Նախագծի 12-րդ հոդվածով առաջարկվող՝ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասի առաջին պարբերության մեջ «կարող է վճարվել» բառերը փոխարինել «վճարվում է» բառերով: <i>Առաջարկության նպատակը դրույթը հստակեցնելն ու «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելն է:</i>	Ընդունվել է:	Նախագծի 12-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

ՄԱՆՈՒԿՅԱՆ /118 ընտրատարածք/			
ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ /024 ընտրատարածք/ ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ /046 ընտրատարածք/ ՍՈՒՔԻԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ /080 ընտրատարածք/ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ /118 ընտրատարածք/	Նախագծի 13-րդ հոդվածով առաջարկվող՝ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության մեջ «երեք տարվա» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով:	Ընդունվել է:	Նախագծի 13-րդ հոդվածով առաջարկվող՝ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ և երրորդ պարբերություններում «երեք տարվա» բառերը փոխարինվել են «մեկ տարվա» բառերով: Միաժամանակ, առաջարկության շրջանակներում խմբագրվել է նաև նախագծով առաջարկվող՝ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև Նախագծի 23-րդ հոդվածում:
ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ /024 ընտրատարածք/ ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ /046 ընտրատարածք/ ՍՈՒՔԻԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ /080 ընտրատարածք/ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ /118 ընտրատարածք/	Նախագծի 19-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասում «30» թիվը «45» թվով փոխարինելու մասին դրույթը հանել: <i>Առաջարկում ենք կենսաթոշակից ետ գանձումների չափը բոլոր դեպքերի համար թողնել նույն՝ 30 տոկոս չափը:</i>	Ընդունվել է:	Նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ կետը հանվել է, հոդվածը խմբագրվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով. «գ. երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեզիստորում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու ժամանակահատվածում:»:	Ընդունվել է:	Հաշվի առնելով օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության վերաբերյալ ՀՀ ԱԺ պատգամավորների արած առաջարկությունը՝ առաջարկվում է օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետում, 9-րդ հոդվածի 4-րդ կետում, 11-րդ հոդվածի 3-րդ կետում, 17-րդ հոդվածի 1-ին կետի «ե.» ենթակետում, 2-րդ կետի «գ.» ենթակետում, 3-րդ և 4-րդ կետերում «նոր» բառից հետո նշել լրացվող մասի (կետի) համարը:	Ընդունվել է:	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետում, 9-րդ հոդվածի 4-րդ կետում, 11-րդ հոդվածի 3-րդ կետում, 17-րդ հոդվածի 1-ին կետի «ե.» ենթակետում, 2-րդ կետի «գ.» ենթակետում, 3-րդ և 4-րդ կետերում կատարվել են համապատասխան լրացումներ:

Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետը «դ» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով. «ե. վերջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Սույն մասի 5-րդ կետում նշված անձը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունի մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան հետ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում նույն բնակության վայրում (հասցեում) հաշվառված լինելու ժամանակահատվածում»:	Ընդունվել է:	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետը «դ» ենթակետից հետո լրացվել է նոր ենթակետով:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվող՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի. 1) 1-ին մասը «Կենսաթոշակը» բառից հետո լրացնել «կենսաթոշակի իրավունք ունեցող» բառերով. 2) 1-ին մասից հանել «տասնչորս տարեկան չդարձած» բառերը, 3) 1-ին մասի «անձի բնակության վայրի (հասցեի)» բառերը փոխարինել «կենսաթոշակի իրավունք ունեցող անձի հաշվառման հասցեի» բառերով, 4) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացնում է անձամբ: Կենսաթոշակի իրավունք ունեցող՝ տասնչորս տարին լրացած անձը կարող է կենսաթոշակ նշանակելու դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել անձամբ»: 5) 7-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով.»:	Ընդունվել է:	Նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվող՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով. «օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասը «կենսաթոշակառուի» բառից հետո լրացնել «, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի» բառերով.»:	Ընդունվել է:	Նախագծի 12-րդ հոդվածը լրացվել է նոր կետով, որով փոփոխություններ են կատարվում օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասում (տես նախագծի 12-րդ հոդվածի 1-ին կետը):
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ կետը (1-ին ընթերցմամբ ընդունված տարբերակի 2-րդ կետը) շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) 9-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «9. Կենսաթոշակը նաև վճարվում է կենսաթոշակառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) կողմից Հայաստանի Հանրապետությունում տրված և Հայաստանի Հանրապետությունում	Ընդունվել է:	Նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ կետը (1-ին ընթերցմամբ ընդունված տարբերակի 2-րդ կետը) շարադրվել է նոր խմբագրությամբ:

	գործունեությունն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով, եթե այդ մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում:»:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերությունում «բնակվելու» բառը «հաշվառված լինելու» բառերով փոխարինելու, իսկ «բնակվել է» բառերը «հաշվառված է եղել» բառերով փոխարինելու մասին դրույթներով:	Ընդունվել է:	Հաշվի առնելով օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվող փոփոխությունների ծավալը՝ 36-րդ հոդվածի 3-րդ մասը ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ, ՀՀ ԱԺ պատգամավորների կատարած առաջարկությունների շրջանակներում խմբագրելով նաև օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ կետի «ա» ենթակետում «լրանալուն հաջորդող ամսվա 1-ից» բառերը «լրանալու օրվանից» բառերով փոխարինելու վերաբերյալ դրույթով:	Ընդունվել է:	Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ կետը լրացվել է համապատասխան դրույթով:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հիմք ընդունելով Նախագծի 13-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ ԱԺ պատգամավորների ներկայացրած առաջարկությունը՝ նախագծի 23-րդ հոդվածը ներկայացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիների կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում և կենսաթոշակը վճարելը վերսկսվում է օրենքով սահմանված կարգով կենսաթոշակառուի դիմելու դեպքում: Սույն մասով սահմանված դեպքում չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված է եղել Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով): Եթե Հայաստանի Հանրապետությունում բնակվող (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու համար դիմում է ներկայացրել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, սակայն դիմումի հետ (կամ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը) չի ներկայացրել այլ պետությունից կենսաթոշակ չստանալու մասին փաստաթուղթը, ապա չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու ամսվան նախորդող երեք տարվա՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Սույն մասով սահմանված դեպքում, եթե կենսաթոշակառուն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց	Ընդունվել է:	Նախագծի 23-րդ հոդվածը լրացվել է համապատասխան դրույթով:

	հետո կրկին դիմում է չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու համար, ապա չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված է եղել Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով): Եթե Հայաստանի Հանրապետությունում բնակվող (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու համար դիմում է ներկայացրել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը և դիմումի հետ (կամ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը) ներկայացրել է այլ պետությունից կենսաթոշակ չստանալու մասին փաստաթուղթը, ապա չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու ամսվան նախորդող երեք տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:»:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նախաբանը «մայիսի 5-ի» բառերից հետո լրացնել «ՀՕ-221» բառերով:	Ընդունվել է:	Նախագծի նախաբանը խմբագրվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նախաբանում «մայիսի 25-ի» բառերը փոխարինել «հունիսի 14-ի» բառերով:	Ընդունվել է:	Նախագծի նախաբանը խմբագրվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Ձինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նախաբանում «մարտի 7-ի» բառերը փոխարինել «հուլիսի 3-ի» բառերով:	Ընդունվել է:	Նախագծի նախաբանը խմբագրվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետերով. «1) Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափով, իսկ նշված կազմից երկկողմանի ծնողազուրկ (որբ) զինծառայողներին՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված չափի քսանապատիկի չափով:». 2) Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ձինծառայողները ենթակա են պարտադիր պետական ապահովագրության ծառայողական պարտականությունները,	Ընդունվել է:	Նախագիծը խմբագրվել է:

	Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների, մարտական հերթապահության և հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհվելու (մահանալու) դեպքերից:». 3) Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասը «գումարների» բառից հետո լրացնել «չափերը,» բառով:»: Ըստ այդմ, նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերով:		
--	--	--	--